«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ և ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Դաստիարակ՝ ԿԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Մանկապարտեզ՝ «ՆԱՆԵ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ» ՀՈԱԿ

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն

2. Ընտանիքի դերը երեխայի զարգացման հարցում

3. Մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում

4. Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքում

5. Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցությունը՝
որպես երեխայի զարգացման գրավական

..Ի՞նչ են շահում դաստիարակներն ու պարտեզը

..Ի՞նչ է շահում ընտանիքը

6. Ժողովների անցկացման ուղենիշներ

.. Ժողովներ վարելիս հարկավոր է ձգտել՝

..Ծնողների գնալուց անմիջապես հետո՝

..Ոչ պաշտոնական գրառումներ

..Պատի տեղեկատվական թերթեր

..Առաջարկությունների տուփ

7. Հայտարարություն

8. Կարծիք ծնողից

9. Կարծիք տնօրենից

10. Եզրակացություն

11. Գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր անհատի ճակատագիրը դասավորվում է դեռ մանկուց: Երեխաների դաստիարակության, զարգացման, ապագայի ձևավորման մեջ որքան մեծ է ընտանիքի դերը դրանից էլ զատ՝ մանկապարտեզինը: Մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունը երեխաների զարգացման կարևոր մասն են կազմում, քանի որ այդ կապը ավելի արդյունավետ է դարձնում երեխայի ճիշտ զարգացմանը նպաստելը: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզը շահում է ծնողների՝ տվյալ բնագավառին իրազեկությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումներից: Դրա շնորհիվ մանկավարժները հնարավորություն են ունենում հասնել երեխայի վարքի դրդապատճառների առավել համակողմանի պատկերացման: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը և թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների, հակակրանքների մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին: Ընտաննիքի և մանկապարտեզի համագործակցության կենտրոնում երեխան է: Սակայն համգործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնել հաջողության:

Մեր աշխատանքի բուն նպատակը հնարավորինս ներկայացնել մանկապարտեզ-ընտանիք կապի առանձնահատկությունները, առավելությունները երեխայի դաստիարակության հարցում:

Ընտանիքի դերը երեխայի զարգացման հարցում

«Մարդու մանկությունից հիմք դրված սկզբունքները նման են մատղաշ ծառի կեղևին փորագրված տառերին , որոնք աճում են, ծավալվում են նրա հետ, կազմում նրա անքակտելի մասը»: *Վ.Հյուգո*

Դաստիարակությունը, ինչպես հայտնի է, նպատակաուղղված ներգործություն է երեխաների զարգացման, նրանց գիտակցության ու վարքի, աշխարհայացքի, արարքների և սովորույթների վրա: Դաստիարակության հիմնական նպատակն անձի ձևավորմանն ու նրա հետագա զարգացմանը նպաստելն է՝ սկսած ծնված օրից: Ուստի ընտանիքը եղել և մնում է անձի դաստիարակության հիմնական օղակն ու վճռական գործոնը: Հետևապես դաստիարակության մեջ կարևորը դրա ճիշտ սկիզբն է: Սխալ դաստիարակությունը միշտ արատներ է ծնում: Հայաստանում դեռևս 4-րդ դարից կիրառվել են ընտանիքին, ամուսնությանը, ընտանեկան դաստիարակությանը վերաբերող ներքին և արտաքին կանոններ:

Մխիթար Գոշը (12-րդ դար) նշում էր, որ զավակների զանցանքների և հանցաքների համար ամենից առաջ պատասխանատու են ծնողները: Ներսես Շնորհալին խորհուրդ էր տալիս երեխային դաստիարակել վաղ մանկությունից, խրատել, նրանց սրտի մեջ ներարկել բարության, ազնվության և մարդասիրության սերմեր: Երեխան աչքերը բացելով տեսնում է իր ծնողներին, շփվում նրանց հետ: Ծնողների վաղ ներգործությունը, երեխայի հետ շփումը ազդում են նրա հետագա զարգացման վրա, նույնիսկ շատ վաղ տարիքում, երբ կարող են չգիտակցվել երեխայի կողմից:

Մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում

Երեխայի ուսուցման նպատակն է այնպես անել, որ նա ընդունակ լինի շարունակելու իր զարգացումն առանց ուսուցչի օգնության։ ***Էլբերտ Հաբարդ***

Մարդկային շփման առաջին փորձը երեխաները ստանում են ընտանիքում, բայց հասարակությանն ինտեգրվելու առաջին մեծ փուլը երեխայի համար մանկապարտեզն է։ Մանկապարտեզը մեծ դեր ունի մանկան սոցիալականացման գործում. Այստեղ երեխան գտնում է նոր միջավայր, նոր աշխարհ՝ նոր կանոններով, նոր առօրյայով։ Այն մի վայր է, որը երեխային բերում է ինքնաճանաչման, զարգացնում նրա հետաքրքրություններն ու ազատությունը։ Մանկապարտեզն այն վայրն է, ուր զարկ է տրվում երեխայի մտավոր ուժերի զարգացմանն ու կառուցվում նրա սոցիալական կերպարը: Մանկապարտեզը, ի տարբերություն ընտանեկան միջավայրի, հնարավորություն է տալիս երեխային շփվել իր հասակակիցների հետ, կրթվել և դաստիարակվել իր տարիքին համապատասխան ծրագրերով և մեթոդներով, սովորել և ընտելանալ օրվա ժամակարգին, աշխատակարգին, դառնա ավելի ինքնուրույն:Մանկապարտեզի ընտրության ժամանակ ծնողները պարտադիր պետք է ուշադրություն դարձնեն՝

- Ինչպիսի՞ դաստիարակներ և դայակներ են զբաղվում երեխայի խնամքով և դաստիարակությամբ:
- Ի՞նչ մեթոդով են իրականացվում երեխայի զարգացման ծրագրերը:
- Արդյոք երեխան սիրում է դաստիարակին և դաստիարակի օգնականին։ Հաճույքո՞վ է հաճախում, թե՞ պարտադրված:
- Արդյո՞ք երեխան ճնշման չի ենթարկվում հասակակիցների և մեծահասակների կողմից:
- Որքանո՞վ են մանկապարտեզի պայմանները համապատասխանում սանիտարահիգենիկ պահանջներին:
- Որքանո՞վ է մանկապարտեզը երեխայի զարգացման համար նպաստավոր միջավայր ապահովում:

Երեխան ունի տեսնելու, մտածելու և զգալու իր առանձնահատուկ ունակությունները: Չկա ավելի հիմար բան,
քան դրանք մեր ունակություններով փոխարինել փորձերը:

Ժան Ժակ Ռուսո

Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքում

Ժամանակակից մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը: Մանկավարժները պետք է ստեղծեն ներդաշնակ, ամուր կապ՝ ի շահ երեխայի դաստիարակության: Կարևոր է, որ ծնողները հավասար ընկալեն մանկավարժ-երեխա փոխհարաբերությունը, զգան դաստիարակի մասնագիտական հմտության արժեքը, գնահատեն նրա անձնային հականիշները և մասնակցեն մանկապարտեզում իրականացվող կրթության, դաստիարակության և զարգացման գործընթացին: Այդ համագործակցությունից շահում է, թե՛ երեխան, թե՛ ընտանիքը, թե՛ տվյալ հաստատությունը:

Ծնողները երեխայի առաջին ուսուցիչներն են և առաջին օրինական ծառայողները: Իսկ երեխաները հրաշալի ընդօրինաողներ են: Այդ իսկ պատճառով ծնողները (և երեխայի հետ շփվող բոլոր մեծահասակները) պետք է հետևեն իրենց ցանկացած քայլին, խոսքին և կատարալ գործողություններին: Բայց ընտանիքները շատ տարբեր են, և չենք կարող ակնկալել, որ բոլոր ընտանիքները նույն կերպ կմասնակցեն երեխայի կրթությանը, խնամքին, դաստիարակությանը, հնարավորինս շատ ժամանակ կհատկացնեն նրանց և կաջակցեն ամենափոքր հարցերում:

Այս պարագայում մեծ է մանկապարտեզի և պրոֆեսիոնալ մանկավարժի դերը: Երեխայի հետ աշխատող դաստիարակը պետք է խոսի ծնողի հետ, քննարկի երեխային վերաբերվող բոլոր խնդիրները:

Ծնողի հետ արդյունավետ հաղորդակցում ապահովելու համար, դաստիարակը պետք է բազմաբնույթ գործողություններ ծավալի, տարբեր ռազմավարություն կիրառի, լինի ստեղծագործ, ճկուն, բարեհամբույր, մեծահոգի, համբերատար, բանիմաց և հոգատար։ Ծնողի տեղեկացված լինելը երեխայի ցանկացած արարքի մասին, էլ ավելի է հեշտացնում համագործակցությունը ծնողի հետ,ավելի միավորում է նրանց որպես գործընկերներ և արդյունավետ դարձնում աշխատանքը:

«Լավ մանկապարտեզը ոչ թե փոխարինում, այլ լրացնում է ընտանեկան դաստիարակությունը» ***Բենջամին Սփոք***

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցությունը՝ որպես երեխայի զարգացման գրավական

Վաղ տարիքի երեխաների սոցիալական զարգացումը կանոնակարգվում է երկու կառույցների միջոցով՝ նախադպրոցական հաստատություն և ընտանիք: Որոշ մանկավարժներ, վստահելով իրենց գիտելիքներին, համարում են, որ իրենք բոլորից ճիշտ են դաստիարակում: Այդպես են մտածում նաև շատ ծնողներ՝ կարծելով, որ իրենց երեխային ավելի լավ գիտեն և հաջողությամբ կարող են լուծել նրան վերաբերող ցանկացած խնդիր: Այս երկու մոտեցումներն էլ թերի են: Անհրաժեշտ է ի մի բերեր այդ երկու սոցիալական ինստիտուտների (ընտանիքի և նախադպրոցական հաստատության) ուժեղ և թույլ կողմերը: Երեխայի զարգացման որոշ ոլորտներում, օրինակ՝ հուզական, ֆիզիկական, ընտանիքի հնարավորություններն են ավելին, իսկ ուսուցման, ստեղծագործական ունակությունների զարգացման և այլն հարցերում՝ մանկապարտեզինը :Ընտանիքների և նախադպրոցական հաստատության գործունեության համատեղ ծրագիրը հեշտացնում է երեխայի սոցիալական զարգացումը՝ սոցիալականացումը:

Ինչո՞ւ է անհրաժեշտ խթանել մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունը:

Երբ ընտանիքի անդամները դրական մասնակցություն են ունենում մանկապարտեզի կյանքին, նույնիսկ եթե այդ մասնակցությունը կարճատև է և ոչ պարբերական, երեխայի ինքնագնահատականը մեծանում է: Երեխային վստահություն է ներշնչում այն հանգամանքը, որ իր ընտանիքը հավանություն է տալիս տան աշխարհից լիովին տարբերվող այն մյուս աշխարհին, որտեղ ինքն անցկացնում է առանց ծնողների: Մանկապարտեզի կյանքին ընտանիքների մասնակցությունը է՛լ ավելի է ոգեշնչում երեխաներին:

Ի՞նչ են շահում դաստիարակներն ու պարտեզը

- Ծնողների և դաստիարակի միջև երեխայի կարիքների և զարգացման մակարդակի մասին տեղեկությունների փոխանակումից շահում է թե՛ ընտանքը, թե՛ մանկապարտեզը: Ծնողները, լինելով տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ, կարողանում են մանկապարտեզին աջակցել կոնկրետ նախաձեռնություններում՝ սկսած նյութականից մինչև մասնագիտական խորհրդատվություն:
- Մանկապարտեզի աշխատանքն ավելի արդյունավետ է դառնում, երբ ծնողներն ու ընտանիքը դառնում են նրա գործընկերը, ընդունում և շարունակում են մանկապարտեզի նախաձեռնությունները, ինչպես նաև իրենք են նախաձեռնություններով հանդես գալիս:

Ի՞նչ է շահում ընտանիքը

- Մանկապարտեզի կյանքին ծնողների մասնակցությունը օգնում է ծնողներին ավելի լավ հասկանալ մանկապարտեզի ծրագիրը, հասկանալ իրենց երեխայի հաջողությունների և դժվարությունների հիմքերն ու պատճառները, դիտարկել երեխայի վարքը, հասկանալ երեխայի զարգացման հետ կապված հարցերը, որոնք էլ ավելի հեշտ կդարձնեն երեխայի դաստիարակումը տանը:
- Ծնողներն ու ընտանիքը կարող են մասնագիտական խորհրդատվություն ստանալ երեխայի զարգացմանն առնչվող այն բոլոր հարցերում, որոնցում իրենք դժվարանում են կամ չեն կողմնորոշվում:
- Մանկապարտեզի կյանքում ներգրավելու համար դաստիարակները պետք է նախաձեռնող լինեն և ուղիներ փնտրեն երեխաների միջոցով յուրաքանչյուր ընտանիքի հետ հաղորդակցվելու համար:

Դրա համար տնօրինությունը և դաստիարակները պետք է մշակեն և զարգացնեն ծնողների և ընտանիքի այլ անդամների հետ աշխատելու համար անհրաժեշտ հստակ նախագծեր և դրանց իրականացման մեթոդներ։ Որպեսզի ընտանիքի մեծամասնությունը ներգրավվի, պետք է անհատական մոտեցուն կիրառվի:

Այսինքն՝ ընտանիքը ոչ թե դեպքից դեպք, այլ մշտապես տեղյակ է մանկապարտեզի ծրագրերին, գործունեությանը, մանկավարժական մոտեցումներին և մեթոդիկային։ Ավելին, կարող է մասնակցել, առաջարկներ անել, որոնք անպայման լսվում են, քննարկվում: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության: Առաջարկում ենք մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր ու արդյունավետ համագործակցության հետևյալ ուղղություններ.

- Շաբաթական կամ ամսական լրատուներ. տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները:
- Ծնողական ժողովներ. քննարկվում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող մտահոգությունների մասին հարցեր:
- Ծնողական համաժողովներ. դրանց նպատակը ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակումն է:
- Առավոտյան հանդիպումների ընթացքում ծնողներին նախապես հայտնվում են ներկայացվող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատուներում:
- Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին. դաստաիարակները ներկայացնում են այն գործողությունները, որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կատարվել նաև տանը:

- Գրքերի փոխանակումներ. սրանք ոչ պաշտոնական հանդիպումներ են այն ծնողների և մանկավարժների համար, ովքեր հետաքրքրվում են գրքով և կարդալուց հետո հավաքվում են՝ կիսելու իրենց գաղափարներն ու կարծիքները:
- Այցելություններ ընտանիք.
- Բաց դռների օրեր.
- Հարց ու պատասխանի ցերեկույթներ.
- Մանկավարժական հյուրասրահ.
- Գաղափարների տոնավաճառ.
- Վստահության հեռախոս.
- Բարի գործերի օրեր.
- Կլոր սեղան.
- Զրույցներ՝ անհատական և խմբային.
- Խորհրդատվություններ՝ անհատական, ենթախմբերով և խմբային.
- Անկետավորում.
- Երեխաների ընդհանուր նպատակային զննումներ.
- Փոռատոներ և տոնակատարություններ.
- Սպորտային միջոցառումներ.
- Ցերեկույթներ:
- Կարևոր տեղ է հատկացվում ծնող-մանկավարժ արդյունավետ ժողովների անցկացմանը:

Դրանց նախապատրաստումը դաստիարակները պետք է դիտեն որպես մի շարունակական գործընթաց: Սեպտեմբերին բոլոր խմբերում անցկացվում են ծնողների հետ հարցումներ՝ ելնելով նրանց խնդիրներից և հետաքրքրություններից: Ըստ այդմ էլ պլանավորվում են <<Բաց դռների օր>>, <<Ընտանեկան թերթի թողարկում>>, նմանատիպ այլ միջոցառումներ:

Եվ այսպես՝ մայրերը, նաև հայրերը /ինչը հատկապես խիստ ցանկալի է/, ամենագործուն մասնակցություն են բերում նախադպրոցական հաստատությունների աշխտանքներին: Իսկ դա նպաստում է երեխաների սոցիալական վիճակի բարելավմանը: Ընտանեկան պատի թերթերում կարող են ստորագրել՝ <<Ես պաշտպանում եմ առողջությունս>>, <<Նոր տարին մոտենում է>>, <<Հայրենիքի պաշտպանները>> և այլ խորարգրերով հոդվածներ:Ուսումնական տարվա սկզբին անցկացվող ծնողական ժողովների ժամանակ ծնողները ծանոթանում են տարվա ընթացքում նախատեսված աշխատանքներին, կրթության և դաստիարակության պլաններին: Տեղեկատվության ձևով հաղորդվում են մանկավարժական գիտելիքներ: Ձևավորվում են անկյուններ, որոնցում տեղադրվելու են ծնողների համար խորհրդատվական նյութեր՝ բոլոր բաժինների ծրագրով: Հատուկ թղթապանակներով ներկայացվում են հակիրճ տեղեկատվական խորհրդատվություններ՝ մանկավարժի, հոգեբանի և բժշկի կողմից: Կան այլ թղթապանակներ, որոնցում դաստիարակները տեղադրում են ֆոտոնյութեր: Դրանց միջոցով լուսաբանվում է երեխաների մասնակցությունը մանկապարտեզի միջոցառումներին: Հատուկ ուշադրության են արժանի «Խորհուրդ են տալիս ծնողները» ընդհանուր խորագրով նյութերը /այստեղ հայրիկները և մայրիկները գաղտնիքիներ են փոխանակում/: Ներառված են նաև «Նոր բուժման ձև գրիպից», «Աղցանների բաղադրատոմսեր», «Լավագույն տոնական սեղան՝ ծնողների մասնակցությամբ» և այլ օգտակար խորհուրդներ:

Ժողովների անցկացման ուղենիշներ

- Ճանաչելով ընտանիքներին՝ դուք ավելի հեշտությամբ կհարմարվեք ծնողների միջև առկա անհատական տարբերություններին: Ծնողների վերաբերմունքն ըստ իրենց կրթության և փորձի՝ կարող է տատանվել գոհունակությունից մինչև թերահավատություն: Նախապես իմանալով ժողովների նկատմամբ ծնողների վերաբերմունքի այս տարբերությունները՝ յուրաքանչյուր իրադրությունից դուրս գալու համար ձեզ ավելի պատրաստ կզգաք:

- ժողովների մասի հայտարարությունից և ընդհանուր տեղեկատվությունից բացի՝ յուրաքանչյուր ծնողի կոնկրետ տեղեկություններ հաղորդե՛ք ժողովին առնչվող ձեր նպատակների մասին: Այդ կերպ նրանք մինչև ձեր հանդիպումը մտածելու բան կունենան: Ժամանակ հատկացրե՛ք ժողովի համապատասխան միջավայրի ստեղծմանը:
- Ստեղծե՛ք ընկերական մթնոլորտ՝ թեթև հյուրասիրություն առաջարկելով: Ծնողների հետ քննարկե՛ք երեխային առնչվող սոցիալական, հուզական, կրթական, ճանաչողական և ֆիզիկական նպատակները: Բացատրե՛ք, թե ինչպես կարելի է հասնել դրանց: Նշեք՛ անհրաժեշտ ռազմավարություններն ու պլանները:

Ժողովներ վարելիս հարկավոր է ձգտել՝

- օգնել ծնողներին՝ իրենց հանգիստ, հարմարավետ և ցանկալի հյուր զգալ, քանի որ մանկապարտեզը մանկավարժի տարածքն>> է,
- հաղորդակցվել ծնողների հետ՝ իրենց մակարդակին համապատասխան, խուսափել նեղ մասնագիտական բառապաշարի օգտագործումից,
- շեշտը դնել երեխայի բնավորության դրական հատկանիշների վրա,
- ծնողներին առաջարկել հատուկ մեթոդներ, որոնցով նրանք կարող են տանը օգնել իրենց երեխաներին:

Ծնողների գնալուց անմիջապես հետո՝

- անհրաժեշտ է գրի առնել ժողովի մանրամասն արձանագրությունը՝ ներառելով առաջարկություններն ու քննարկված հարցերը,
- անհրաժեշտ է գրի առնել ժողովի մանրամասն արձանագրությունը՝ ներառելով առաջարկություններն ու քննարկված հարցերը,
- եթե մանկավարժից պատասխան է ակնկալվում, ապա հարկավոր է պատասխանել՝ առանց հապաղելու, — անպայման պետք է ապահովել հետադարձ կապը/հանձնարարականներ, այցելություն, երկտող ծնողներին…/:

Տնային այցելությունները մասնագետներին երեխաների ու նրանց ծնողների կյանքի պայմանների մասին անմիջական տվյալներ ստանալու լրացուցիչ հնարավորություն են ընձեռում: Տնային պայմաններն այցելուին թույլ են տալիս առավելագույնս իրագործել այն սկզբունքը, ըստ որի՝ կրթական արդյունավետ ծրագրերը սկիզբ են առնում այնտեղ, ուր գտնվում է հենց ինքը՝ սովորողը:

Տնային այցելությունները մասնագետներին երեխաների ու նրանց ծնողների կյանքի պայմանների մասին անմիջական տվյալներ ստանալու լրացուցիչ հնարավորություն են ընձեռում: Տնային պայմաններն այցելուին թույլ են տալիս առավելագույնս իրագործել այն սկզբունքը, ըստ որի՝ կրթական արդյունավետ ծրագրերը սկիզբ են առնում այնտեղ, ուր գտնվում է հենց ինքը՝ սովորողը:

Տնային այցելությունների ծրագրերը բովանդակային և մեթոդական առումով խիստ բազմազան են: Դրանք իրաից նշանակալիորեն տարբերվում են ըստ այն հանգամանքի, թե այցելության նպատակը ծնո՞ղն է, երեխա՞ն, թե՞ ընտանիքը: Տնային այցելություն կատարողի և ծնողի միջև փոխհարաբերությունները պետք է կառուցվեն համագործակցային սկզբունքով: Կարելի է տնային այցելություններն այնպես կազմակերպել, որ ծնողի ներկայությունը քիչ կամ բոլորովին անհրաժեշտ չլինի: Սա հնարավոր է հատկապես այն դեպքում, երբ նպատակը տունը խմբասենյակին նմանեցնելն է կամ ուսումնական կենտրոնների հենքով մշակված ծրագիրը տան պայմաններում իրականացնելը: Այստեղ նույնպես կիրառվելու է երեխայակենտրոն մոտեցում, որը չի պահանջում ծնողների ներկայությունը:

Տնային այցելությունները մի յուրահատուկ ուղի են հարթում դեպի ընտանիք և բացառիկ տեղեկատվություն ապահովում ընտանեկան իրավիճակի մասին: Միևնույն ժամանակպետք չէ ակնկալել, որ տնային այցելությունները կկարողանան լուծել խոշոր հիմնախնդիրներ:

. **Ոչ պաշտոնական գրառումներ**

Ոչ պաշտոնական գրառումներ մանկավարժական կազմը կարող է երեխայի միջոցով տուն ուղարկել կարճ գրառումներ: Դրանք կպարունակեն ընտանիքի անդամներին ուղղված տեղեկություններ՝ երեխայի կողմից որոշակի հմտությունների ձեռք բերման կամ իրականացված որևէ այլ գործունեության մասին: Կարելի է նաև այդ կերպ շնորհակալություն հայտնել ծնողներին ուսումնական հաստատությանն այս կամ այն ձևով աջակցելու համար: Ընտանիքի անդամները նույնպես կարող են մանկավարժներին ուղարկել երախտագիտություն կամ որևէ խնդրանք պարունակող գրություններ:

Պատի տեղեկատվական թերթեր

Պատի տեղեկատվական թերթն օգտակար է՝ ընտանիքներին միշտ թարմ տեղեկատվություն հաղորդելու առումով: Դրա միջոցով հնարավոր է ազդարարել ժողովները, հատուկ իրադարձությունները, ամենօրյա դասացուցակը, ընտանիքների համար նախատեսված միջոցառումները, ընդհանուր առմամբ ուսումնական հաստատության անցուդարձը:

Առաջարկությունների տուփ

Առաջարկությունների տուփ Ծնողներին առաջարկվում է իրենց մտքերը, մտահոգությունները, առաջարկություններն ու հարցերը մանկավարժական կոլեկտիվի անդամներին ներկայացնել հատուկ տուփի միջոցով: Նրանք կարող են տուփի մեջ գցել գրավոր ձևակերպված իրենց հուզող հարցերը:

Նախադպրոցական հիմնարկներում պետք է գործեն նաև «Վստահության հեռախոս», «Մանկավարժի հյուրասրահ», «Գաղափարների տոնավաճառ»:

Դրանք հաղորդակցության և համագործակցության ժամանակակից ձևեր են, որոնց միջոցով տարբեր մասնագետներ կապի մեջ են մտնում (ընդ որում, նրանք աշխատում են որոշակի օրերի և ժամերի ընթացքում, ասենք՝ ամեն ամսվա առաջին շաբաթվա օրերից մեկը) նախադպրոցականների ծնողների հետ և օժանդակում նրանց ամենատարբեր հարցերում: Նպատակահարմար է տարվա ընթացքում անցկացնել մրցույթ՝ «Ամենահամերաշխ ընտանիքը»:

Դրան մասնակցելու համար ընդհանուր ծնողական ժողովում ընտրվում են ամենաակտիվ ծնողներն ու իրենց երեխաները:

Գոյություն ունեն մանկապարտեզ-ընտանիք կամ ընտանիք-դպրոց արդյունավետ համագործակցության երկու հիմնական ուղիներ՝

1. Հետևողական, հստակ, երկկողմանի հաղորդակցություն1. Հետևողական, հստակ, երկկողմանի հաղորդակցություն
2. Ծնողների ներգրավման բազմազան միջոցներ:

Մանկապարտեզ-ընտանիք կապը հիմվելու է փոխադարձ վստահության վրա: Արդյունավետ հաղորդակցությունը բազմապատկում է այն: Մանկապարտեզ-ընտանիք կապը հիմվելու է փոխադարձ վստահության վրա: Արդյունավետ հաղորդակցությունը բազմապատկում է այն: Ծնողներին ուշադիր լսելով՝ կարելի է արժեքավոր տեղեկություններ ստանալև փոխօգնության բաց հարաբերություններ հաստատել: Երկկողմանի հաղորդակցության կանոնավոր հնարավորությունների միջոցով ծնողներն ու ուսուցիչները սերտորեն համագործակցում են՝ ի շահ երեխաների բնականոն զարգացման:

Նախադպրոցական հաստատությունները չեն փոխարինում ընտանեկան դաստիարակությանը, այլ լրացնում ու համակարգում են այն՝ համագործակցելով երեխաների ծնողների ու ընտանիքների հետ։ Ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը շարունակում է ընտանիքի աշխատանքը, օգնում ընտանիքին։Ուստի երեխայի անհատականության ձևավորման, ներդաշնակ զարգացման համար կարևոր է այդ երկու կարևոր օղակների արդյունավետ համագործակցությունը:

Հայտարարություն

Հարգելի ծնողներ այուն թվականի դեկտեմբերի 23-ին ժամը 15-30 մանկապարտեզի դահլիճում տեղի կունենա ծնողական ժողով :

- **Օրակարգում՝** Ամանորյա միջոցառում
    - Տարվա ամփոփում
    - Առաջին եռամսյակի ամփոփում
    - Ընթացիկ հարցեր

Կարծիք ծնողից

Յուրաքանչյուր անհատի ճակատագիրը դասավորվում է դեռ մանկուց: Ընտանիքից է սկսվում բարոյական դաստիարակման նախահիմքերի կառուցումը: Երեխան ծնվելով ընկնում է իր համար բոլորովին նոր միջավայր, որտեղ նրա առաջին ու հիմնական սյունը ընտանիքն է: Առաջինը երեխան տեսնում է իր ծնողներին, շփվում նրանց հետ, որտեղ դրվում է երեխայի բարոյական, գեղագիտական դաստիարակման հիմքերը:

Երեխաների դաստիարակության, զարգացման, ապագայի ձևավորման մեջ որքան մեծ է ընտանիքի դերը, այնքալ էլ կարևոր է նախակրթարանի դերը:

Հաճախելով նախադպրոցական հաստատություններ երեխաները շփվելու նոր հատկություններ են ձեռք բերել: Երեխաների համար մանկապարտեզում սահմանվել են հատուկ օրակարգ: Զբոսնել են, խաղացել, սնվել օրվա հստակ ժամերին: Ստացել են իրենց առաջին առաջադրանքները, որոնք փորձել են ճշտությամբ կատարել: Նման պարզ խնդիրները երեխաների մոտ զարգացրել են պատասխանատվություն և ինքնուրույնություն: Մանկապարտեզ հաճախելու շնորհիվ երեխաների մոտ զարգացել են սոցիալական հմտությունները, թիմում աշխատելու հմտությունները,խոսքային հմտությունները, հուզական աշխարհը: Երեխաները սովորել են հարգել դիմացինին , ձեռք բերել նոր ընկերներ:

Ծնող-դաստիարակ կապի պահպանումը ուսումնական գործընթացում երեխայի հաջողության բանալին է: Այդ համագործակցության կենտրոնում էլ երեխան է:

Ծնող-դաստիարակ կապը պահպանվել է առավոտյան զրույցներով, երեկոյան երեխաներին վերցնելիս տեղեկություն ստանալով, թե ինչպես անցավ օրը, ինչ սովորեցին, ինչ առաջադրանքներ կատարեցին, երեխայի հետ միասին դիտել այդ օրվա կատարած աշխատանքը: Կապը պահպանվել են նաև իրականացված ծնողական ժողովների և առաջարկությունների արկղիկի միջոցով:

Ինչպես նաև ծնողներս մասնակցություն ենք ունեցել նախակրթարանի միջոցառումներին, բաց դասերին, ցուցաբերել կոնկրետ աջակցություն տարբեր նախաձեռնություններում: Սա օգնել է ծնողներիս լավ հասկանալ նախակրթարանի ծրագիրը և ավելի խորն ըմբռնել երեխայի զարգացման հետ կապված հարցերը, ճիշտ դաստիարակել երեխաներին տանը:

Ծնողներիս ներգրավվածությունը նախակրթարանի գործնեության կյանքում դրական է ազդում երեխաների վրա, ավելի լավ են յուրացնում տրամադրած նյութը, երեխաները զգում են, որ մշտապես գտնվում են ուշադրության կենտրոնում, զգում են, որ իրենց նախակրթարանային կյանքը կարևոր է ընտանիքի կողմից, երեխաները իրեն զգում են հարգված և սիրված:

Շատ կարևոր է մեզ՝ ծնողներիս համար իմանալ դաստիարակի կարծիքը մեր երեխաների ցուցադրած վարքի և պահվածքի մասին,քանզի այդ տեղեկությունը երկուստեք տալիս է արժեքավոր ինֆորմացիա երեխայի հետաքրքրությունների, նախասիրությունների, անհատական հատկանիշների և կարողությունների մասին: Այս ինֆորմացիան լավագույնս ծառայում է մեր երեխաների շահերին:

Ծնողներիս ներգրավումը նախակրթարանի կյանքին, դաստիարակի հետ կապի պահպանումը և ճիշտ համագործակցությունը նպաստում է մեր երեխաների անթերի զարգացմանը: Այդ համագործակցությունից շահել է, թե՛ երեխան, թե՛ ընտանիքը,և թե՛ նախակրթարանը:

Կարծիք Տնօրենից

Համագործակցությունն ավելի ակնառու է դառնում ծնողական ժողովների ժամանակ, երբ քննարկվում են հարցեր, որոնք փոխդարձ վստահություն են պահանջում:

Ժողովի ժամանակ քննարկեցինք և ամփոփեցինք երեխաների առաջին եռամսյակի դիտարկումների արդյունքները: Դիտարկումները պարունակում են 6-ոլորտ : Մենք ներկայացնում ենք մեր կողմից արված դիտարկումները և լսում ծնողի մոտեցումը: Նաև տեղեկանում ենք թե արդյո՞ք կա տարբերություն տանը և պարտեզում երեխայի զարգացման վերաբերյալ, այսինքն երեխան հնարավոր է տանը ավելի ակտիվ և շարժուն է քան պարտեզում, որպեսզի մեր հետագա աշխատանքում նոր մեթոդ և մոտեցում գտնենք:

Ուղղորդում ենք ծնողին մեր պարտեզի «ծնողական լրատու» անկյունը, որպեսզի մշտապես ուշադիր լինեն փակցված հայտարարություններին, տեղյակ լինեն պրապմունքների գրաֆիկին, յուրաքանչյուր օր տեսնեն իրենց երեխաների առօրյա աշխատանքները, որոնք պարտադիր տեղադրվում են տեսանելի հատվածում և բնականաբար ծանոթանան շաբաթվա ճաշացանկին, որը թարմացվում է ամեն շաբաթ:

Վերջին ժողովի ժամանակ քննարկվեց ամանօրյա միջոցառման պլանը, հագուստները, դահլիճի զարդարանքները: Քանի որ միջոցառումն ուներ բեմադրական հատված՝ հեքիաթի տեսքով, յուրաքանչյուր մուլտֆիլմից մեկ հերոս ամանօրյա հեքիաթի մի մասն էր կազմում և մեզ անհրաժեշտ էր տասից ավել կենդանու զգեստ, ծնողներից երկուսը համաձայնեցին զբաղվել հագուստներով, հինգը զարդարելու են դահլիճը, իսկ մյուսները օգնելու են ձեռքի աշխատանքների պատրաստման հարցերում:

Եվ այս ամենը արդյունավետ է դառնում դաստիարակ-պարտեզ- ծնող փոխվստահության և փոխհամագործակցության արդյունում, քանի որ պարտեզը հաշվի է առնում յուրաքանչյուր ծնողի կարծիք և մոտեցում երեխայի հետ կապված ամեն հարցում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով մանկապարտեզ-ընտանիք հարաբերությունների և համագործակցության մասին եկանք մի շարք մանկավարժական որոշ եզրահանգումների.

Երեխայի դաստիարակության և կրթության համար հիմնական պատասխանատվության կրողն ընտանիքն է։ Մանկապարտեզը լրացնում, լավագույն դեպքում օգնում է ծնողին, ավարտին հասցնում նրա սկսած աշխատանքը՝ ստեղծելով առողջ, զարգացնող միջավայր՝ երեխայի զարգացման համար:

- Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության հաջողությունը կախված է ընտանիքի և մանկապարտեզի փոխհարաբերությունից։Մանկապարտեզը պետք է աշխատի ընտանիքի հետ, պետք է պահպանի բարեկամական, գործընկերային հարաբերություններ, որովհետև մանկապարտեզ-ընտանիք կապի ամրապնդման համար կարևորվում է մեր համատեղ աշխատանքը, որն էլ երկուստեք հաճելի է:
- Երբ ծնողը մասնակից է դառնում մանկապարտեզի առօրյային, խաղերին, միջոցառումներին և այլն, դա ավելի ամրացնում է մանկապարտեզ -ընտանիք կապը:
- Ընտանիք-պարտեզ արդյունավետ համագործակցություն մեծապես նպաստում է երեխայի զարգացմանը, դրանից շահում են թե՛ ընտանիքթ, թե՛ պարտեզը, իսկ որ ամենակարևորն է, արդյունքում մեծապես շահում է ինքը՝ երեխան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու. Ա. , Սահակյան Ա. Ս «Մանկավարժություն», Երևան 2005թ.
2. Իզնել Ս. , Ջոնս Ժ. «Դպրոցի և ընտանիքի համգործակցությունը»
3. Ղույումչյան Գ. Ե. «Մանկավարժություն», գիրք 2, Երևան 2005թ.
4. Մակարենկո Ա. Ս. «Դաստիարակություն ծնողության վերաբերյալ», 1940թ.
5. Մարության Ա. Ս. , Դալլաքյան Ա. Մ. «Նախադպրոցական մանկավարժություն» բուհական դասագիրք, Երևան 2008թ.
6. Միտոյան Հասմիկ, Սմբատյան Լալա «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան 2010թ.
7. Պետրոսյան Հ. Հ. «Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները», 1-ին և 2-րդ մաս, Երևան 2007թ.
8. Սմբատյան Լ. «Խաղերի և խաղ-զվարճալիքների կազմակերպումը մանկապարտեզում», Երևան 2014թ.